# ԻՄԱՑԻՐ
# ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



## ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 թ.

# ԻՄԱՑԻՐ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018թ.

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ABA Rule of Law Initiative

Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

# Բովանդակություն

Նախաբան ........................................................................................................................3

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ........................................................................................................4

2. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ........................................................................................................5

3. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ........................................................................................8

4. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ........................................................................................13

ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ........................................................................................13

5. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ........................................................................................................15

6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ..................................29

7. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ........................................................................................31

# Նախաբան

Սույն ուղեցույցը մշակվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության CEELI INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության կողմից «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում[1]: Ուղեցույցը նպատակաուղղված է բարձրացնելու մարդու իրավունքների և իրավապաշտպան մեխանիզմների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը:

[1] Սույն ուղեցույցը արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

❖ **Ո՞վ կարող է ընտրել Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ:**

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

❖ **Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք չունեն.**

- դատարանի վճռով[2] անգործունակ ճանաչված անձինք.
- դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար դատապարտված[3] և պատիժը կրող անձինք:

❖ **Ի՞նչ ընտրական համակարգով են անցկացվում Ազգային ժողովի ընտրությունները:**

- Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով՝
- կուսակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակներով[4]:

❖ **Ընտրական տարածքները՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ.**

- Հայաստանի Հանրապետությունում կազմվում է 13 ընտրական տարածք, որոնցից 4-ը՝ Երևան քաղաքում, իսկ 9՝ մարզերում:

❖ **Ի՞նչ հիմունքներով են անցկացվում Ազգային ժողովի ընտրությունները:**

- Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

---

[2] Օրինական ուժի մեջ մտած վճռով:
[3] Օրինական ուժի մեջ մտած դատավճռով:
[4] Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից:

## 2. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

❖ **Ինչպե՞ս են կազմվում ընտրողների ցուցակները, և ովքե՞ր են ընդգրկվում ընտրողների ցուցակներում:**

- Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների:
- Ցուցակներում ընդգրկվում են քվեարկության օրը 18 տարին լրացած և տվյալ ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեներում հաշվառված ՀՀ քաղաքացիները:

❖ **Ինչպե՞ս կարող եք ընտրել, եթե քվեարկության օրը չեք գտնվելու Ձեր հաշվառման վայրի համայնքում:**

- Եթե քվեարկության օրը չեք գտնվելու Ձեր հաշվառման վայրի համայնքում, ապա քվեարկության օրվանից առնվազն 10 օր առաջ պետք է դիմեք Ձեր հաշվառման կամ գտնվելու վայրի անձնագրային ծառայություն կամ ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ նշելով քվեարկության օրը Ձեր գտնվելու վայրի հասցեն:
- Դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանվում են ընտրողների հիմնական ցուցակից և ավելացվում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում՝ դիմողին տրամադրելով համապատասխան տեղեկանք:

➢ Դիմումաձևի, տեղեկանքի, ինչպես նաև բողոքարկման համար անհրաժեշտ ձևանմուշները տե՛ս Հավելված 1-ում:

❖ **Ինչպե՞ս կարող եք ընտրել, եթե ՀՀ-ում հաշվառում չունեք:**

- Եթե ՀՀ-ում առհասարակ հաշվառում չունեք, ապա քվեարկության օրվանից առնվազն 10 օր առաջ պետք է դիմեք ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ այն տարածքի անձնագրային ծառայություն, որտեղ գտնվելու եք քվեարկության օրը՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու նպատակով՝ նշելով քվեարկության օրը ՀՀ-ում գտնվելու վայրի հասցեն:
- Դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողն ընդգրկվում է քվեարկության օրը ՀՀ-ում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, և այդ մասին նրան տրամադրվում է տեղեկանք:

➢ Դիմումաձևի և տեղեկանքի, ինչպես նաև բողոքարկման համար անհրաժեշտ ձևանմուշները տես Հավելված 2-ում:

❖ **Ինչպե՞ս կարող եք նախօրոք ծանոթանալ ընտրողների ցուցակներին:**

- Ընտրողների ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի ներբեռնելու հնարավորությամբ 19.11.2018թ.-ին և 05.12.2018թ.-ին տեղադրվում է www.police.am համացանցային կայքում:

- ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (www.elections.am)՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է մինչև 19.11.2018թ.-ը և 05.12.2018թ.-ը:

- Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է 19.11.2018թ.-ին և 07.12.2018թ.-ին:

❖ **Ինչպե՞ս իմանալ, թե որ տեղամասում եք քվեարկելու:**

- Համայնքում մեկից ավելի ընտրական տեղամաս կազմավորվելու դեպքում ՀՀ Ոստիկանության կողմից քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ ընտրողներին ուղարկվում են ծանուցագրեր՝ քվեարկության օրվա, ընտրականտեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին:

❖ **Ի՞նչ անել, եթե ընդգրկված չեք ընտրողների ցուցակում կամ ցուցակում հայտնաբերել եք Ձեզ կամ այլ անձին վերաբերող անճշտություն:**

- Դուք իրավունք ունեք քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ Ձեր անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու անձնագրային ծառայության ցանկացած բաժանմունք կամ ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

- Դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացվում են՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

➢ Դիմումաձևերի, տեղեկանքի, ինչպես նաև բողոքարկման համար անհրաժեշտ ձևանմուշները տե՛ս Հավելված 3-ում և 4-ում:

❖ **Ի՞նչ անել, եթե հայտնաբերել եք, որ ընդգրկված չեք ընտրողների ցուցակում՝ 2018 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում:**

- Դուք քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը պետք է դիմում ներկայացնեք ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ անձնագրային ծառայության ցանկացած բաժանմունք (իսկ քվեարկության օրը՝ համապատասխան տարածքային

անձնագրային ծառայություն)՝ ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին:

- Դուք կընդգրկվեք ընտրողների լրացուցիչ ցուցակում, եթե.
  - հաշվառված եք համապատասխան ընտրական տեղամասում ընդգրկված հասցեում, սակայն դուրս եք մնացել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից.
  - դիմում եք ներկայացրել համապատասխան ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին, դիմումը չի մերժվել, սակայն չեք ընդգրկվել համապատասխան ցուցակում:

➢ Դիմումաձևերի, տեղեկանքի, ինչպես նաև բողոքարկման համար անհրաժեշտ ձևանմուշները տես Հավելված 5-ում և 6-ում:

# 3. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

## ❖ Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը

- Նախընտրական քարոզչությունը սկսվում է 26.11.2018թ.-ին և ավարտվում 07.12.2018թ.-ին՝ ժամը 24:00-ին:

*Ուշադրություն*

- Քվեարկության օրն ու դրան նախորդող օրը քարոզչությունն արգելված է՝ հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, տպագիր մամուլի, ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների միջոցով:



Նշված արարքները կատարելը առաջացնում է վարչական պատասխանատվություն 400.000 - 700.000 ՀՀ դրամ տուգանքի տեսքով («Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 40.1):

## ❖ Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները

Կուսակցությունների (դաշինքների), թեկնածուների համար ապահովվում են քարոզչություն իրականացնելու ազատ և հավասար պայմաններ:

- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կուսակցություններին (դաշինքներին) հավասար հիմունքներով, անվճար տրամադրում են դահլիճներ և այլ շինություններ՝ ընտրությունների հետ կապված միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

- Հանրային ռադիոն և հեռուստատեսությունը կուսակցությունների (դաշինքների) համար հնարավորություն են ստեղծում հավասար պայմաններով անվճար և վճարովի օգտվելու իրենց եթերաժամանակից:

- Մյուս ռադիոընկերություններն ու հեռուստաընկերությունները պարտավոր են կուսակցությունների (դաշինքների) համար ապահովել իրենց եթերաժամանակից օգտվելու ոչ խտրական պայմաններ:

- Յուրաքանչյուր համայնքի ղեկավար հավասար պայմաններով առանձնացնում է քարոզչական պաստառներ, նյութեր փակցնելու համար անվճար տեղեր (բացառությամբ հանրակրթական դպրոցների):



Քարոզչական պաստառները, նյութերը պոկելը, պատռելը, դրանց վրա գրառում կատարելը առաջացնում է վարչական պատասխանատվություն 50.000 - 100.000 ՀՀ դրամ տուգանքի տեսքով («Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 40.11):

❖ **Քարոզչության իրականացման թույլատրելի վայրերը**

Նախընտրական ժողովները, ընտրողների հետ հանդիպումները կարող են անցկացվել ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կուսակցություններին (դաշինքներին) անվճար տրամադրվող դահլիճներում, այնպես էլ այլ` օրենքով չարգելված վայրերում:




Դպրոցների և մանկապարտեզների դահլիճները կուսակցություններին (դաշինքներին) կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին, միայն այն դեպքում, եթե համայնքում այլ դահլիճներ չկան:

❖ **Քարոզչական պաստառների օգտագործման կարգը**

- Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն.

  - հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

  - ֆիզիկական անձանց համաձայնությամբ` նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների վրա. ***Ուշադրություն:*** Վերոգրյալից բացառություն են կազմում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերը, հանրակրթական դպրոցները, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերը, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտները,

  - ֆիզիկական անձանց համաձայնությամբ` նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող տրանսպորտային միջոցների վրա կամ դրանց ներսում.

  ***Ուշադրություն:*** Բացառություն են կազմում հասարակական տրանսպորտը և տաքսին:

- Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

❖ **Պաստառի օգտագործման կարգը նախընտրական միջոցառումների անցկացման ժամանակ**

- Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են առանց սահմանափակման փակցվել կամ օգտագործվել նախընտրական միջոցառումներ անցկացնելու ժամանակ՝ դրանց անցկացման վայրում, միջոցառման ավարտից հետո դրանք պետք է հանվեն համապատասխան կուսակցության կողմից:

*Պետական ռեսուրսի չարաշահման արգելք*

❖ **Ովքե՞ր չեն կարող իրականացնել քարոզչություն իրենց լիազորությունները, աշխատանքային պարտականությունները իրականացնելիս:**

- հանրային ծառայողները.
- պետական և համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատողները.
- առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների աշխատողները,
- ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողները.
- կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցները:

**Ու՞մ է առհասարակ արգելված իրականացնել քարոզչություն:**

- դատավորներին, դատախազներին, քննչական մարմիններում, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին.
- զինծառայողներին.
- ընտրական հանձնաժողովների անդամներին.
- բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.
- օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց (բացի մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող անձանցից).
- Մարդու իրավունքների պաշտպանին.
- Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին.
- Հաշվեքննիչ պալատի անդամներին.
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.
- ինքնավար մարմինների անդամներին:



Քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձանց կողմից քարոզչություն իրականացնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն քաղաքացիների նկատմամբ՝ 100.000 – 200.000 ՀՀ դրամի, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200.000 – 400.000 ՀՀ դրամի չափով:




**Արգելվում է** քարոզչություն իրականացնել ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները օգտագործելով:



Նշված արարքները կատարելն առաջացնում է վարչական պատասխանատվություն քաղաքացիների նկատմամբ՝ 200.000 – 400.000 ՀՀ դրամի, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝400.000 – 800.000 ՀՀ դրամի չափով («Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 40.8):

***Նախընտրական քարոզչության ընթացքում նյութապես շահագրգռելու և բարեգործություն անելու արգելք***




Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը կուսակցություններին (դաշինքներին) արգելվում է իրենց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:



Նշված արարքները կատարելն առաջացնում է քրեական պատասխանատվություն 2 – 6 տարի ժամկետով ազատազրկման տեսքով (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 154.2):



Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել և ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել:

*Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում գործող այլ արգելքներ*

❖ **Որտե՞ղ չեն կարող տեղակայվել կուսակցությունների (դաշինքների) նախընտրական շտաբները:**

- հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղակայման շենքերում.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում[5].
- ընտրական հանձնաժողովների տեղակայման շենքերում:




Արգելվում է.
08.12.2018թ.-ին և 09.12.2018թ.-ին՝ մինչև ժամը 20.00-ն, հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով հրապարակել կուսակցությունների (դաշինքների) վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները:

*Նախընտրական քարոզչությունը վերահսկող մարմիններ և իրավական պատասխանատվություն*

❖ **Ո՞ր մարմիններն են վերահսկում նախընտրական քարոզչությունը:**

- Վերահսկողություն իրականացնող հիմնական մարմինները տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովներն են:
- Հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը:

❖ **Ու՞մ դիմել քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում:**

- Խախտումներ հայտնաբերելու դեպքում պետք է դիմել կա՛մ խախտման վայրի տարածքային ընտրական հանձնաժողով (եթե խախտումը տեղի է ունեցել կոնկրետ համայնքում), կա՛մ Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

***Ուշադրություն:*** Եթե նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեղի են ունեցել Ձեր իրավունքների քրեաիրավական բնույթի խախտումներ, ապա Դուք կարող եք դիմել իրավապահ մարմիններին: Հաղորդումների ձևանմուշները տե՛ս 7-10-րդ Հավելվածներում:

---

[5] բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրական շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք

# 4. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

❖ **Ընտրական հանձնաժողովները** մարմիններ են, որոնք ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

❖ Ընտրական հանձնաժողովները համակարգը

Կենտրոնական ընտրական հանձնաժողով
7 անդամ

↓

Տարածքային ընտրական հանձնաժողովներ
7 անդամ

↓

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ
10 անդամ

❖ Ներկայումս ՀՀ տարածքում գործում են թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներ:



❖ **Ինչպե՞ս են կազմավորվում կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովները:**

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և նախագահին ընտրվում են Ազգային ժողովի կողմից:
- Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

❖ **Ինչպե՞ս են կազմավորվում տեղամասային ընտրական հանձնաժողովները:**

- Ազգային ժողովում խմբակցություն ունեցող չորս կուսակցություններից յուրաքանչյուրը (ՀՀԿ, «Ծառուկյան», «Ելք», ՀՅԴ խմբակցություններ) նշանակում է տեղամասային ընտրական հանձնաժողովի երկուական անդամ:
- Եվս երկու անդամ նշանակում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովը:

❖ **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնական գործառույթները**

- Կազմակերպում է Ազգային ժողովի ընտրությունները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:
- Վերահսկողություն է իրականացնում Ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառման նկատմամբ:
- Սահմանում է քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, արձանագրությունների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, նմուշները:
- Վերացնում, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ է ճանաչում ընտրական հանձնաժողովների՝ ընտրական օրենսգրքին հակասող որոշումները:
- Ամփոփում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները:

❖ **Տարածքային ընտրական հանձնաժողովների հիմնական գործառույթները**

- Վերահսկողություն են իրականացնում իրենց կողմից սպասարկվող տարածքներում ընտրական օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ:
- Վերացնում են տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ ընտրական օրենսգրքին հակասող որոշումները:
- Հետևում են ընտրողների ցուցակների՝ ընտրական տեղամասերում փակցնելու գործընթացին:
- Վերահսկում են քվեարկության սենյակների պատշաճ կահավորումը:
- Կարող են անվավեր ճանաչել քվեարկության արդյունքները ընտրական տեղամասում:

❖ **Տեղամասային ընտրական հանձնաժողովների հիմնական գործառույթները**

- Կազմակերպում են ընտրությունների քվեարկությունը:
- Կազմում են ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն:

## 5. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

### *Քվեարկության կազմակերպում*

❖ **Քվեարկության տեղը և ժամանակը**

- Քվեարկությունն անց է կացվում Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում ժամը 8.00-ից մինչև 20.00-ն:

Ժամը 20.00-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց դեռևս չքվեարկած ընտրողները իրավունք ունեն քվեարկելու:

❖ **Քվեարկությունը շրջիկ արկղի միջոցով**

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում, ռազմաբժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրերում քվեարկությունը կազմակերպվում է շրջիկ արկղի միջոցով:

❖ **Քվեարկությունը քրեակատարողական հիմնարկներում**

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկություն է կազմակերպվում, և տեղամասային կենտրոններ են կազմավորվում նաև քրեակատարողական հիմնարկներում:

❖ **Քվեարկությունը ՀՀ տարածքից դուրս**

- **Ովքե՞ր կարող են քվեարկել ՀՀ տարածքից դուրս:**

Քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող քաղաքացիները չեն կարող մասնակցել քվեարկությանը բացառությամբ.

- Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամների.
- օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների.
- Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունների՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամների:

❖ Ե՞րբ և ի՞նչ եղանակով է իրականացվում քվեարկությունը ՀՀ տարածքից դուրս:

- Քվեարկությունն իրականցվում է էլեկտրոնային եղանակով:
- Էլեկտրոնային եղանակով քվեարկությունը սկսվում է 30.11.2018թ.-ին ժամը՝ 08:00-ին և ավարտվում է 02.12.2018թ.-ին ժամը՝ 20:00-ին:

*Քվեարկության ռեկվիզիտներ*

❖ Քվեաթերթիկը

❗ Յուրաքանչյուր կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի համար տպագրվում են առանձին քվեաթերթիկներ:

- Քվեաթերթիկի առաջին էջում նշված են.
  - ➢ կուսակցության անվանումը
  - ➢ կուսակցությանը տրված համարը
  - ➢ համապետական ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները:



- Քվեաթերթիկի **երկրորդ էջում նշված են**.
  - կուսակցության համապատասխան տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները՝ ազգանունների այբբենական հերթականությամբ:

(ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկի երկրորդ էջ)


լուսանցք

Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի համարին համապատասխան նշում սև գույնով

(ծանուցում է քվեաթերթիկի լրացման կարգի մասին)

(Նշվում է ընտրական տարածքի համարը)

| հերթական համարը | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | նշումի համար |
|---|---|---|
| 1 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 2 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 3 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 4 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 5 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 6 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 7 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 8 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 9 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 10 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 11 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 12 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 13 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 14 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 15 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 16 | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | |

լուսանցք

**Ուշադրություն**: Ուղեցույցում ներկայացված է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 22.11.2016թ.-ի թիվ 139 որոշմամբ հաստատված քվեաթերթիկի ձևը[6]:

- ❖ **Քվեարկության ծրարը, ինքնասոսնձվող դրոշմանիշը և քվեատուփը**

❖ **Քվեարկության ծրարը**

- պատրաստվում է անթափանց թղթից.
- քվեարկության ծրարի ձևը և չափերը հնարավորություն պետք է տան ծրարում գտնվող քվեաթերթիկի վրա փակցնելու ինքնասոսնձվող դրոշմանիշ:



[6] ԿԸՀ-ի կողմից հաստատվելիք ձևանմուշը հնարավոր է որոշակիորեն տարբերվի ներկայացված ձևից: Ուղեցույցի հրապարակման դրությամբ ԱԺ արտահերթ ընտրությունների համար քվեաթերթիկի ձևը դեռևս ԿԸՀ-ի կողմից հաստատված չի եղել:

❖ Ինքնասոսնձվող դրոշմանիշը

- Ինքնասոսնձվող դրիոշմանիշը պաշտպանիչ շերտերով տպարանային եղանակով պատրաստված դրոշմանիշ է, որը քվեարկության ծրարի կտրվածքի միջով փակցվում է քվեաթերթիկին:
- **Ինքնասոսնձվող դրոշմանիշի վրա նշվում են**.

➢ ընտրության անվանման հապավումը.
➢ քվեարկության ամսաթիվը.
➢ ընտրական տեղամասի համարը:

Առանց ինքնասոսնձվող դրոշմանիշի քվեաթերթիկը համարվում է չսահմանված նմուշի, և հաշվի չի առնվում արդյունքներն ամփոփելիս:

❖ **Քվեատուփը**
- Քվեատուփը պետք է լինի թափանցիկ:

Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացվում է առնվազն մեկ քվեատուփ:

➢ Տեխնիկական սարքավորումը

Ընտրողների գրանցումն իրականացվում է հատուկ տեխնիկական սարքավորումներով, որոնք.
- հաշվառում են քվեարկության մասնակիցներին.
- բացառում ընտրողների կրկնակի գրանցումը:



*Քվեարկություն*

❖ **Քվեարկության սկիզբը**
- Քվեարկության օրը տեղամասային հանձնաժողովի նախագահը ժամը 8.00-ին հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

❖ **Քվեարկության համար անհրաժեշտ փաստաթղթերը**

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը կարելի է մասնակցել անձը հաստատող հետևյալ փաստաթղթերով՝

- ՀՀ անձնագիր (կենսաչափական և ոչ կենսաչափական).
- նույնականացման քարտ.
- անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ (9-րդ ձև):

- **Քրեակատարողական հիմնարկում գտնվող անձինք և զինծառայողները քվեարկությանը մասնակցում են անձը հաստատող հետևյալ փաստաթղթերով.**
  - քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ.
  - զինվորական վկայական կամ զինվորական գրքույկ, այն դեպքում, երբ ընտրողն ընդգրկված է զորամասի ընտրողների ցուցակում:

❖ **Ընտրողի թիվ 1 գործողությունը (ինքնության ստուգում և գրանցում)**

- Քվեարկությանը մասնակցելու համար նախ պետք է ստուգվի ընտրողի ինքնությունը և ընտրողը պետք է գրանցվի տեխնիկական սարքավորման միջոցով:
- Տեղամասային կենտրոն մուտք գործելուց հետո Դուք պետք է կատարեք հետևյալ գործողությունները.

Մոտեցեք տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետին (այսուհետ՝ մասնագետ) և ներկայացրեք անձը հաստատող փաստաթուղթը.

↓

Եթե ներկայացրել եք անձնագիր կամ նույնականացման քարտ, մասնագետը ստուգում է ինքնությունը փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով, և փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ.

↓

Եթե ներկայացրել եք անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ, կամ անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորումը չի ընթերցում, ապա մասնագետը ստեղնաշարով ներմուծում է ներկայացված փաստաթղթի համարը տեխնիկական սարքավորման մեջ.

Եթե ընտրողը ներկայացրել է այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ, ապա մասնագետը դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

- **Ի՞նչ է նշանակում էկրանին հայտնված դեղին ազդանշանը:**

| | |
|---|---|
| Եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, | էկրանին հայտնվում են դեղին նշան, տեղամասի համարը, որի ցուցակում ընդգրկված է այդ ընտրողը (առկայության դեպքում): |
| Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը լրացել է, | էկրանին հայտնվում է դեղին նշան, ընտրողը չի զրկվում քվեարկելու հնարավորությունից (բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած փաստաթուղթ): |

Եթե Ձեր անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետն անցել է, սակայն Դուք ունեք ժամկետը չլրացած այլ փաստաթուղթ, ապա քվեարկել կարող եք միայն այդ փաստաթղթով:

- **Ի՞նչ է նշանակում էկրանին հայտնված կանաչ ազդանշանը:**

| | |
|---|---|
| **Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը,** | էկրանին հայտնվում է **կարմիր նշան,** մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Վերջինս քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ: |

Եթե ընտրողը գրանցված է այդ տեղամասի ցուցակում և մինչ այդ պահը անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը, ապա էկրանին հայտնվում է կանաչ նշան:

❖ **Ի՞նչ գործողություններ են կատարվում էկրանին կանաչ նշանի հայտնվելուց հետո:**

- Եթե էկրանին հայտնվել է կանաչ նշան, ապա ընտրողը պետք է ներմուծի իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը:
- Անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը: Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում այս քայլը բաց է թողնվում:

❖ **Քվեարկության կտրոնի տպումը**

Մատնահետքի ներմուծումից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, որը պարունակում է հետևյալ տվյալները.

- ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը,
- ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը,
- քվեարկության կտրոնի հերթական համարը,
- ընտրողի լուսանկարը՝ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում,
- ընտրության անվանումը, քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը, կտրոնը տպելու ժամը,
- տեղամասում մեկից ավելի տեխնիկական սարքավորման օգտագործման դեպքում տեղեկություն այն մասին թե, որ տեխնիկական սարքավորման միջոցով է ընտրողը գրանցվել:

**!** Մի՛ մոռացեք Մասնագետից վերցնել Ձեր անձը հաստատող փաստաթուղթը և քվեարկության կտրոնը:




❖ Ընտրողների գրանցումը առանց տեխնիկական սարքավորման



Տեխնիկական սարքավորում չի կիրառվում հետևյալ դեպքերում՝

- Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով քվեարկություն,
- քրեակատարողական հիմնարկում քվեարկություն,
- շրջիկ արկղով քվեարկություն,
- քվեարկության օրը կազմվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակով քվեարկություն,
- տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում:

❖ Ի՞նչպես է կատարվում գրանցումը առանց տեխնիկական սարքավորման կիրառման:

- Հանձնաժողովի անդամը ստուգում է ընտրողի ինքնությունը.
- ընտրողների ցուցակում գտնում է վերջինիս տվյալները (քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակով քվեարկելու դեպքում՝ լրացնում ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը).
- լրացնում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի համարը,

- ընտրողը ստորագրում է իր անվան դիմաց.
- հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը ստորագրության դիմաց:

Քրեակատարողական հիմնարկներում, շրջիկ արկղով քվեարկության կամ տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում ընտրողներին առանց տեխնիկական սարքավորման կիրառման գրանցման դեպքում հանձնաժողովի համապատասխան անդամը լրացնում է համարակալված կտրոն՝ դրա վրա նշելով, թե որ ցուցակի ընտրող է, ցուցակում ընտրողի հերթական համարը, անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:

❖ **Քվեարկության կտրոնը զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով և քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում**

- Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով և քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում առանց տեխնիկական սարքավորման գրանցվելուց հետո մասնագետի կողմից տեխնիկական սարքավորման մեջ ներմուծվում են հետևյալ տեղեկությունները.
  - ➢ որ ցուցակի ընտրող է,
  - ➢ ընտրողի համարը համապատասխան ցուցակում:
- Այնուհետև ընտրողը ներմուծում է իր մատնահետքը:
- Այդ գործողություններից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, Մասնագետը կտրոնը փոխանցում է ընտրողին:

❖ **Ընտրողի թիվ 2 գործողությունը (գրանցում ընտրողների ցուցակում)**

- **Քվեարկության կտրոնը ստանալուց հետո**

➢ մոտեցեք ընտրողների ցուցակը լրացնող հանձնաժողովի անդամին և տրամադրեք նրան կտրոնը.
➢ հանձնաժողովի անդամը ընտրողների ցուցակում կգտնի Ձեր անունը.
➢ ստորագրեք Ձեր տվյալների դիմաց.
➢ հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքը կդնի Ձեր ստորագրության դիմաց և կտրոնի վրա:

_!_ Մի՛ մոռացեք վերցնել քվեարկության կտրոնը:

Եթե ընտրողը չի կարողանում ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների

❖ Ընտրողի թիվ 3 գործողությունը  (քվեաթերթիկները և ծրարը ստանալը)

Ընտրողների ցուցակում ստորագրելուց հետո.

- մոտեցեք քվեաթերթիկները և քվեարկության ծրարները տրամադրող հանձնաժողովի անդամին.

- ներկայացրեք քվեարկության կտրոնը.

- վերցրեք ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

Հետևեք, որ Ձեզ տրամադրվի բոլոր կուսակցությունների քվեաթերթիկներից մեկական քվեաթերթիկ:

Դուք չեք կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկները ստանալուց:

❖ Ընտրողի թիվ 4 գործողությունը (քվեարկություն)

- Քվեաթերթիկները և քվեարկության ծրարն ստանալուց հետո մոտեցեք քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

- Քվեարկության խցիկում ընտրեք այն կուսակցության կամ դաշինքի  քվեաթերթիկը, որի օգտին պատրաստվում եք քվեարկել:
  **Ուշադրություն**. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով.
  Քվեաթերթիկի առաջին էջում որևէ նշում չի արվում:

- Տարածքային  ընտրական ցուցակի թեկնածուներից որևէ մեկին ընտրելու դեպքում Ձեր ընտրած կուսակցության  քվեաթերթիկի երկրորդ էջում ԿԸՀ-ի սահմանած ձևով միատեսակ նշում կատարեք նախընտրած թեկնածուի անվան դիմացի քառանկյունում:
- Առանց ծալելու՝ տեղադրեք քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ:
- Չօգտագործված քվեաթերթիկները գցեք քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ:

Քվեաթերթիկի վրա չպետք է կատարվեն ավելորդ գրառումներ, այլապես դա կհանգեցնի քվեաթերթիկի անվավերության:

❖ **Եթե քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեք.**

➢ տեղեկացրեք այդ մասին Հանձնաժողովի նախագահին, ինչից հետո կարող եք քվեարկության խցիկ հրավիրել այլ անձի, որը չպետք է լինի՝
  - ընտրական հանձնաժողովի անդամ.
  - վստահված անձ.
  - դիտորդ.
  - զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ.
  - այցելու:

❗ Անձն իրավունք ունի օգնելու միայն մեկ ընտրողի:

Ուշադրություն: Օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

❖ **Եթե սխալ եք լրացրել կամ վնասել եք քվեաթերթիկը.**

- դիմեք հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար,
- Ձեզ կհատկացվի ընտրությունների մասնակցող **յուրաքանչյուր** կուսակցության մեկական քվեաթերթիկ:

❗ Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը անհապաղ մարվում է:

❖ **Ընտրողի թիվ 5 գործողությունը (ծրարը քվեատուփում տեղադրելը)**

- Քվեարկությունը ավարտելուց հետո վերցրեք ծրարը և մոտեցեք ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին:

- Հանձնեք նրան քվեարկության կտրոնը:

❗ Հանձնաժողովի անդամը ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև Ձեր անձը հաստատող փաստաթուղթը:

- Առանց քվեարկության ծրարը վերցնելու՝ Հանձնաժողովի անդամը ծրարի բացվածքի միջով քվեաթերթիկին է փակցնելու ինքնասոսնձվող դրոշմանիշը:
- Այնուհետև Հանձնաժողովի անդամը բացում է քվեատուփի ճեղքը և հնարավորություն է տալիս Ձեզ քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:



Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարն ու անհապաղ մարում



Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:




**Ի՞նչ է արգելվում անել քվեարկության օրը**:

- Արգելվում է տեղամասային կենտրոն զենք, զինամթերքով մուտք գործելը այդ թվում՝ զինծառայողներին, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողներին:
  - ! Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:
- Քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է՝ բացառությամբ օրենքով սահմանված ընտրողին օգնելու դեպքի.
- Քվեարկության ընթացքում ընտրություններին մասնակցող թեկնածուին արգելվում է գտնվել տեղամասային կենտրոնում կամ տեղամասային կենտրոնին հարող՝ մինչև 50 մետր շառավղով տարածքում, բացառությամբ քվեարկությանը մասնակցելու դեպքի:
- Արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը:

**Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:**

- Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:
- Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:
- Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:



Քվեարկողին չի թույլատրվում երրորդ անձանց (բացառությամբ օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը խախտելը՝ քվեաթերթիկը լուսանկարելու և հրապարակելու միջոցով: Այդ արարքները առաջացնում են քրեական պատասխանատվություն 100.000 - 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով:

***Ուշադրություն:*** Եթե քվեարկության օրը տեղի են ունեցել Ձեր իրավունքների քրեաիրավական բնույթի խախտումներ, ապա Դուք կարող եք դիմել իրավապահ մարմիններին: Հաղորդումների ձևանմուշները տե՛ս 7, 8, 10 և 11-րդ Հավելվածներում:

❖ **Ինչպե՞ս է անցկացվում քվեարկությունը ստացիոնար բուժհաստատություններում և ձերբակալված անձանց պահման վայրերում:**

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ հիվանդանոցներում և զինվորական հոսպիտալներում ստացիոնար բուժում անցնող ընտրողների համար, ինչպես նաև ՁՊՎ-ներում գտնվող ձերբակալված ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է այդ հաստատություններում՝ շրջիկ արկղի միջոցով, քվեարկության գաղտնիության պահպանմամբ:
- Հիվանդանոցներում, զինվորական հոսպիտալներում և ՁՊՎ-ներում քվեարկությունը կազմակերպվում է քվեարկության օրը ժամը **8.00**-ից մինչև **18.00**-ն ընկած ժամանակահատվածում:

❖ **Շրջիկ արկղով իրականացվող քվեարկության առանձնահատկությունները**

- Հանձնաժողովի անդամը ստուգում է ընտրողի ինքնությունը և վերջինիս անձնագրային տվյալները լրացնում է ընտրողների համապատասխան լրացուցիչ ցուցակում:
- Ընտրողը ստորագրում է իր անվան դիմաց:
- Հանձնաժողովի անդամը լրացնում և ընտրողին է տալիս համարակալված կտրոնը[7]:
- Հանձնաժողովի անդամը ընտրողին է հանձնում ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:
- Ընտրողը կուսակցություններից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով՝ առանց նշում անելու, իսկ չօգտագործված քվեաթերթիկները զցում է դրանց համար նախատեսված հատուկ փաթեթի մեջ:
- Քվեարկություն կատարելուց և քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելուց հետո ընտրողը հանձնաժողովի անդամին է հանձնում համարակալված կտրոնը, ինչից հետո հանձնաժողովի անդամն, առանց քվեարկության ծրարն ընտրողի ձեռքից վերցնելու, քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ի-

[7] Տեխնիկական սարքավորման միջոցով տպվող կտրոնի փոխարեն

նքնասոսնձվող դրոշմանիշը, այնուհետ բացում է շրջիկ արկղի ճեղքը՝ հնարավորություն ընձեռելով ընտրողին քվեարկության ծրարը նետել դրա մեջ:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողը քվեաթերթիկի երկրորդ էջում նշում չի անում, այսինքն՝ իր ընտրած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի համապատասխան տարածքի թեկնածուների օգտին չի քվեարկում:



❖ Ի՞նչ առանձնահատկություններ ունի քվեարկությունը քրեակատարողական հիմնարկներում:

- ՔԿՀ-ներում քվեարկությունը նախապատրաստում և կազմակերպում է ՔԿՀ-ի պետը: Քվեարկությունը անց է կացվում ժամը 9.00-20.00-ը ընկած ժամանակահատվածում:
- ՔԿՀ-ներին տեխնիկական սարքավորումներ չեն տրամադրվում: Ընտրողների գրանցումը կատարվում է առանց տեխնիկական սարքավորումների կիրառման:
- ՔԿՀ-ներում գտնվող ընտրողի ինքնությունը ստուգվում է վերջինիս անձը հաստատող փաստաթղթի օգնությամբ:
- Քրեակատարողական հիմնարկներում ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է համարվում ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հաստատված վկայականը:
- Ընտրողներին առանց տեխնիկական սարքավորման կիրառման գրանցելու դեպքում հանձնաժողովի համապատասխան անդամը.
  - ➢ ստուգում է ընտրողի ինքնությունը.
  - ➢ վերջինիս անձը հաստատող փաստաթղթի տվյալները լրացնում է ընտրողների ցուցակում.
  - ➢ ընտրողը ստորագրում է իր անվան դիմաց.
  - ➢ հանձնաժողովի համապատասխան անդամի կողմից լրացվում և ընտրողին է տրվում համարակալված կտրոնը[8]:

❖ Հաջորդող գործողություններն իրականացվում են Ընտրական օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգին համապատասխան:

[8] Տեխնիկական սարքավորման կողմից տպվող կտրոնի փոխարեն

# 6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

❖ **Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման կարգը**

- Քվեարկության օրը ժամը 20.00-ի դրությամբ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տրվում, որից հետո Հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ճեղքը: Միանգամից սկսվում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով սահմանված կարգով կատարված հաշվարկները, մինչև քվեարկության հաջորդ օրվա ժամը 08:00-ը կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն՝ դրանում, ի թիվս այլ տվյալների, նշելով.
  - ➢ ընտրություններին մասնակցող յուրաքնչյուր կուսակցությանը կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը.
  - ➢ կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը:

- Արձանագրության մեկ օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին:

❖ **Տարածքային ընտրական հանձնաժողովը** ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները մուտքագրում է համակարգիչ՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով և տպում է քվեարկության արդյունքների աղյուսակավորումը,



Տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ պետք է ավարտվի մինչև դեկտեմբերի 10-ը՝ ժամը 16:00-ն: Տարածքային ընտրական հանձնաժողովն աղյուսակավորում է քվեարկության արդյունքները՝ ըստ ընտրական տեղամասերի, ինչպես նաև կուսակցությունների և դրանց տարածքային ցուցակներում ընդգրկված թեկնածուների գումարային արդյունքների:

- Քվեարկության արդյունքների աղյուսակավորման **վերջնական** օրինակը, վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցնում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

❖ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների ամփոփումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո ամփոփում է ընտրության քվեարկության նախնական արդյունքները,
- Քվեարկությանը հաջորդող 7-րդ օրը՝ դեկտեմբերի 16-ին, ԿԸՀ-ը ամփոփում է Ազգային ժողովի ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:

*Ուշադրություն:* Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները պաշտոնապես հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում (www.elections.am)՝ որոնման հնարավորությամբ ոչ ուշ, քան 11.12.2018թ. ժ. 12.00-ը:

# 7. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

| Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: |
| --- |

❖ Ո՞վ կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը):

Ի թիվս ընտրական իրավունքի այլ սուբյեկտների՝ բողոքարկել կարող է յուրաքանչյուր ոք, ով կարծում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը:

**❖ Ի՞նչ ժամկետներում պետք է ներկայացվի բողոքը տարածքային ընտրական հանձնաժողով:**

- Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով:
  Տարածքային ընտրական հանձնաժողով բողոք ներկայացնելու ժամանակահատվածներն են.
- քվեարկության օրը (09.12.2018թ.) ժամը 8.00–ից մինչև ժամը 22.00–ն.
- քվեարկության հաջորդ օրը (10.12.2018թ.)՝ ժամը 12.00–ից մինչև ժամը 18.00–ն.
- քվեարկությունից հետո երկրորդ օրը (11.12.2018թ.)՝ ժամը 9.00–ից մինչև ժամը 11.00–ն:

**❖ Ի՞նչ ժամկետներում պետք է ներկայացվի բողոքը Կենտրոնական ընտրական հանձնաժողով:**

- Տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների[9], գործողության (անգործության) դեմ բերվող բողոքները ներկայացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով օրացուցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Այս բողոքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող են ներկայացվել.

- աշխատանքային օրերին՝ ժամը 9.00–ից մինչև 18.00–ն,
- քվեարկության նախորդ օրը (08.12.2018թ.)՝ ժամը 9.00–ից մինչև 19.00–ն,
- քվեարկության օրը (09.12.2018թ.)՝ ժամը 8.00–ից մինչև ժամը 22.00–ն,
- քվեարկության հաջորդ օրը (10.12.2018թ.)՝ ժամը 12.00–ից մինչև ժամը 18.00-ն:

[9] Ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

- Եթե օրացուցային 3–րդ օրը լրանում է ոչ աշխատանքային օրը, բացառությամբ քվեարկության նախորդ, քվեարկության կամ քվեարկության հաջորդ օրերի, ապա բողոքը կարող է ներկայացվել հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 9.00–ից մինչև 18.00–ն:

  - Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները[10], գործողությունը (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան:
  - Ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) դեմ հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:

❖ **Ի՞նչ ժամկետներում են քննարկվում դիմում-բողոքները ընտրական հանձնաժողովներում:**

- Ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը ստացված դիմումներին Տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը:

- **Քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00–ն**, ստացված դիմումներին Տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը**, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը՝ **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ**:

❖ **Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով:**

*Ծանոթագրություն: Բողոքարկման ընթացակարգերը, ժամկետները և ձևանմուշները տե՛ս 1-6-րդ Հավելվածներում:*

❖ **Եթե Դուք ներկայացել եք տեղամաս և հայտնաբերել, որ Ձեր տվյալների դիմաց ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն** քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, Դուք կարող եք դիմել համապատասխան տարածքային հանձնաժողով:

[10] Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան:

- Դիմումը պետք է ներկայացնել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով 10.12.2018թ.-ին ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո 12.12.2018թ.՝ ժամը 11.00-ն: Դիմումը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես դիմումատուի կողմից:

  *Ծանոթագրություն: Դիմում-հայտարարության ձևանմուշը տե՛ս Հավելված 12-ում:*

## *ՀՆԱՐԱՎՈՐ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ*

- **Եթե Ձեզ առաջարկել կամ տվել են կաշառք որևէ կուսակցության/դաշինքի կամ դրա թեկնածուի օգտին քվեարկելու կամ այլ անձի փոխարեն կամ մեկից ավելի անգամ քվեարկելու համար** Դուք կարող եք դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

  Ուշադրություն: **Կաշառք ստացած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչ դրա մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում կամովին հայտնում է իրավապահ մարմիններին և աջակցում հանցագործությունը բացահայտելուն:**

  *Ծանոթագրություն: Հաղորդման ձևանմուշը տե՛ս Հավելված 7-ում:*

- **Եթե Ձեզ հարկադրում են (այդ թվում՝ ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով) քվեարկել ընտրություններին մասնակցող կուսակցության/դաշինքի, դրա թեկնածուի օգտին կամ այլ անձի փոխարեն կամ մեկից ավելի անգամ,** Դուք կարող եք դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

  *Ծանոթագրություն: Հաղորդման ձևանմուշը տե՛ս Հավելված 8-ում:*

- **Եթե Ձեզ հարկադրում են կատարել նախընտրական քարոզչություն կամ հրաժարվել այն կատարելուց,** Դուք կարող եք դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

  *Ծանոթագրություն: Հաղորդման ձևանմուշը տե՛ս Հավելված 9-ում:*

- **Եթե մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին որոշում ընդունվելը կուսակցության/-դաշինքի թեկնածուն, անդամը, լիազորված անձը կամ վստահված անձը Ձեզ և/կամ ընտրողների որևէ խմբին տվել, բաժանել կամ խոստացել է դրամ/սննդամթերք/արժեթղթեր/ապրանքներ կամ մատուցել ծառայություններ, այդ թվում՝ բարեգործության անվան տակ, ապա** Դուք կարող եք դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

  *Ծանոթագրություն: Հաղորդման ձևանմուշը տե՛ս Հավելված 10-ում:*

- **Եթե Ձեզ հարկադրում են հայտնել քվեարկության արդյունքը, քվեարկության ժամանակ՝ Ձեր քվեարկությունը բացահայտելու նպատակով որևէ մեկը մուտք է գործել քվեախցիկ կամ ստուգել է Ձեր քվեաթերթիկը կամ Ձեր քվեարկության գաղտնիությունը խախտել է այլ կերպ,** Դուք կարող եք դիմել ՀՀ քննչական կոմիտե:

  *Ծանոթագրություն: Հաղորդման ձևանմուշը տե՛ս Հավելված 11-ում:*

### ❖ Ե՞րբ կարող եք դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

- Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացում Ձեր իրավունքները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց կողմից խախտվելու դեպքում կարող եք դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

### ❖ Ի՞նչ գործառույթներ ունի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

- Մարդու իրավունքների պաշտպանը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանն ու նպաստում խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Ուշադրություն

- Ընտրական իրավունքների իրականացմանն առնչվող բողոքները Պաշտպանին կարող եք ուղղել 116 և (096) 116100 հեռախոսահամարներով կամ աշխատակազմ այցելելով:
- Զանգահարելով վերոնշյալ հեռախոսահամարներով կամ այցելելով աշխատակազմ Դուք կարող եք ստանալ իրավական խորհրդատվություն:
- Անհրաժեշտության դեպքում իրականացվում է արագ արձագանքում:
- Եթե նախընտրական ժամանակահատվածում կամ ընտրության օրը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պատշաճ ձևով ընթացք չեն տալիս Ձեր դիմումներին, ապա կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին: Այսպես, օրինակ, եթե նախընտրական ժամանակահատվածում կամ ընտրության օրը Ձեզ փորձում են ուղղորդել, առաջարկում են որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկել, կամ ստիպում են ընտրություններին մասնակցել կամ հակառակը՝ հրաժարվել ընտրություններին մասնակցելուց, ապա պատկան մարմինների (տվյալ դեպքում՝ Ոստիկանության) անգործության, ոչ պատշաճ արձագանքի դեպքում կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին[11]:

### ❖ Ո՞վ կարող է դիմել:

Պաշտպանին կարող է դիմել ցանկացած անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից: Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

[11] http://www.ombuds.am/media/5674984.html?fbclid=IwAR3TvE0NJGHur_tZeV_BJ4TlWp3LdtwxIfSemV-nW__UqtdbuDCgjyOTHUE

❖ **Ինչպե՞ս դիմել:**

- Բողոքը Մարդու իրավունքների պաշտպանին կարող է ներկայացվել գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները կարող են ներկայացվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ՝ հասցե՝ **ք. Երևան, Պուշկինի 56ա (ընդունարան՝ +374-10-537651, թեժ գիծ՝ 116)**, ուղարկվել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացվել առցանց՝ այցելելով http://www.ombuds.am/complaints.html:

- Մարդու իրավունքների պաշտպանն ունի մարզային գրասենյակներ հետևյալ մարզերում.

- **Շիրակի մարզային գրասենյակ**
  Հայաստան, Շիրակի մարզ, Գյումրի
  Միեր Մկրտչյան փող., 44 շենք, բն.46 +374-312-41981

- **Գեղարքունիքի մարզային գրասենյակ**
  (Գավառի տարածաշրջան)
  Հայաստան, Գեղարքունիքի մարզ, Գավառ
  Ազատության փող., 17/2 շենք +374-264-30116

- **Սյունիքի մարզային գրասենյակ**
  (Կապանի տարածաշրջան)
  Հայաստան, 3301, Սյունիքի մարզ, Կապան
  Մելիք-Ստեփանյան փող., 6 շենք +374-285-20116

❖ **Ի՞նչ բողոքի ձև է սահմանված:**

- Բողոքի համար հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն Ձեր անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը: Բողոքում պետք է նշվեն նաև մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները և եթե Դուք ունեք գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող եք կցել բողոքին:
- *Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու կամ բողոք հասցեագրելու համար որևէ վճար կամ պետական տուրք նախատեսված չէ:*

## *ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ*

❖ **Ու՞մ կարող եք դիմել Ձեր ընտրական իրավունքների խախտման դեպքում իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:**

- Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացում Ձեր իրավունքների խախտման դեպքում անվճար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով օրենքով սահմանված դեպքերում կարող եք դիմել Հանրային պաշտպանի գրասենյակ:

❖ **Ո՞վ է Հանրային պաշտպանը:**

➢ Հանրային պաշտպանի գրասենյակը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես անապահով խավերին օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում **անվճար** իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

➢ Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող հանրային պաշտպանը փաստաբան է: Հանրային պաշտպանը վարձատրվում է պետական բյուջեից օրենքով սահմանված չափով և կարգով:

❖ **Ո՞վ կարող է դիմել ընտրական իրավունքի խախտման հետ կապված դեպքերով:**

**Դիմել կարող են.**

- քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձինք[12],
- Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները,
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները,
- դատապարտյալները,
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները,
- Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները,
- գործազուրկները,
- միայնակ բնակվող կենսաթոշակառուները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք,
- անվճարունակ այն ֆիզիկական անձինք, ովքեր իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում[13],

[12] Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը:

[13] Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց

- հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք,
- օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք[14]:

❖ **Ինչպե՞ս դիմել:**

➢ Հանրային պաշտպանին կարելի է դիմել ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ բոլոր մարզերում:
➢ Հասցե՝ Ք. Երևան, Զաքյան փող., 2 շենք, 2-րդ հարկ, հեռախոս՝ +374-10-600714 Հանրային պաշտպանի գրասենյակի մարզային նստավայրերի հասցեները տե՛ս այստեղ՝
http://advocates.am/images/hpg/Regional_offices_PDO_30.03.2018.pdf

❖ **Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության (ABA/ROLI) Հայաստանյան ներկայացուցչության թեժ գիծ**

- Ընտրական իրավունքի իրականացման, ինչպես նաև ընտրական իրավունքի խախտման հետ կապված հարցերով իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով կարող եք դիմել նաև Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության (ABA/ROLI) Հայաստանյան ներկայացուցչության թեժ գիծ՝ հետևյալ հեռախոսահամարներով.

**Երևան.**
թեժ գիծ 08000-1414
Հասցե՝ *Զաքիյան 7-3, 3-րդ հարկ*

**Սևան.**
թեժ գիծ 08000-1415
Հասցե՝ *Նաիրյան փողոց 164*

**Կապան.**
թեժ գիծ 08000-1416
Հասցե՝ *Արամ Մանուկյան 1ա/19*

**Վանաձոր.**
թեժ գիծ 08000-1417
Հասցե՝ *Տիգրան Մեծ 59*

[14] 2-15-րդ կետերում մատնանշված անձանց անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել 1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով). 2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ. 3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1**

**Ուշադրություն**

Եթե քվեարկության օրը չեք գտնվելու Ձեր հաշվառման վայրի համայնքում, ապա **մինչև 2018 թվականի նոյեմբերի 29-ը** պետք է դիմեք Ձեր հաշվառման կամ գտնվելու վայրի անձնագրային ծառայություն կամ ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ նշելով քվեարկության օրը Ձեր գտնվելու վայրի հասցեն.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

____________________________________________
(Հաշվառման կամ գտնվելու վայրի անձնագրային ծառայություն)

**Դ Ի Մ ՈՒ Մ**[15]

**Ես (իմ վստահորդ**[16]**)՝** ________________________________________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

**անձը հաստատող փաստաթուղթ՝** _________________, **տրված՝** __________________________
(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)

**հաշվառված՝**__________________________________________________________
(հաշվառման վայրը)

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու համար խնդրում եմ իմ տվյալները ժամանակավորապես հանել ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնել քվեարկության օրն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

***Քվեարկության օրը գտնվելու եմ*** __________________________________________
(նշվում է քվեարկության օրը գտնվելու մարզը, համայնքը և վայրը)
________________________________________________________________

Կից՝ ______________________________________________________________
(նշվում է «լիազորագիր» բառը՝ այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում)

**Դիմող՝** (լիազորված անձ) ______________________________ ________________
(անունը, հայրանունը, ազգանունը) (ստորագրություն)

«____» ________________ 20 թ.

---

[15] Դիմումի ձևը հաստատված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թ. հունիսի 17-ի N 27-Ն որոշմամբ:

[16] Այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:

Դիմումը ստանալուց հետո **եռօրյա ժամկետում** ընտրողի տվյալները ժամանակավորապես հանվում են ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացվում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Դիմողին այդ մասին տրամադրվում է համապատասխան տեղեկանք՝ հետևյալ ձևաչափով.

### Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### ԸՆՏՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝

Քաղաքացի ______________________________________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

անձը հաստատող փաստաթուղթ՝ ___________________, տրված՝ ______________________
(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)

*վերաբերյալ տվյալները ժամանակավորապես հանվել են՝* ______________________
__________________________________________________
(նշվում է մարզի, համայնքի անվանումը և հաշվառման վայրը, իսկ քվեարկության օրվանից 40-ից մինչև 10 օր առաջ ընկած ժամանակահատվածում՝ նաև ընտրական տեղամասի համարը)

*ընտրողների ցուցակից և ավելացվել* ______________________ *մարզի*

______________ *համայնքի,* ______________________ *հասցեի,*

*թիվ* ______________________ *ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:*
(ընտրական տեղամասի համարը նշվում է քվեարկության օրվանից 40-ից մինչև 10 օր առաջ ընկած ժամանակահատվածում ստացված դիմումների դեպքում)

______________________________________ ______________
(լիազոր մարմնի կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

«____» ____________ 20 թ.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ընտրողների ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով՝ համապատասխանաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Եթե մերժում եք ստացել անձնագրային ծառայությունից կարող եք դիմել ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ նաև՝ ԱՎՎ) կամ ՀՀ ոստիկանության պետին, ԱՎՎ-ի կողմից մերժում ստանալու դեպքում կարող եք դիմել ՀՀ ոստիկանության պետին: Վերադաս մարմնին կարող եք դիմել հետևյալ ձևաչափով՝

____________________________________________
(անհրաժեշտ է նշել վարչական մարմնի տվյալները՝
ՀՀ Ոստիկանության պետ կամ Անձնագրային և վիզաների վարչություն)

ԴԻՄՈՂ

_________________________
(Անուն Ազգանուն)

Հասցե՝ __________________________

____ ________________ 2018թ.

ԲՈՂՈՔ

1. **Բողոքարկման առարկան.**

1.1. Ես՝ ________________ հաշվառված եմ ______________________________________________
(անուն ազգանուն, անձնագրային տվյալներ) (նշել հաշվառման հասցեն)
հասցեում, սակայն ՀՀ ազգային ժողովի ընտրությունների օրը՝ դեկտեմբերի 9-ին, գտնվելու եմ այլ համայնքում՝ __________________________ հասցեով:
(քվեարկության օրը գտնվելու վայրի հասցե)

1.2. ______________ 2018թ. դիմում եմ ներկայացրել _______________________________________
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)
ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին:

1.3. Սակայն ___________________________ կողմից դիմումը մերժվել է _______ 2018թ.:
(անհրաժեշտ է նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

1.4. ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմու-

մը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Լիազոր մարմինը դիմողին այդ մասին տրամադրում է համապատասխան տեղեկանք: */այս պարբերության ներառումը կամընտրական է:/*

Հաշվի առնելով այն, որ ըստ գտնվելու վայրի՝ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

**2. Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերականգնել իմ ընտրական իրավունքը և ընդգրկել ինձ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

**3. Կից ներկայացվող փաստաթղթերը.**

**3.1.** Դիմումի մերժման պատճենը.

Դիմող՝

_______________________________ _____________________________________

(ստորագրություն)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները:

Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ հայցվորի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, հայցվորին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել ցանկացած ժամանակ:

Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը, բայց ոչ ուշ, քան հայցադիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցը դատարան կարող է ներկայացվել հետևյալ ձևաչափով.

__________________________________________

(անհրաժեշտ է նշել Պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը)

**Հայցվոր՝**

__________________________

(Անուն Ազգանուն Հայրանուն)

________________________________________

Հայցվորի անձնագրային տվյալները

Հասցե՝ ______________________________

Հեռ.՝ ______________________________

(կամընտրական)

**Պատասխանող՝**

______________________________________________

(Անձնագրային և վիզաների վարչություն կամ համապատասխան բաժանմունք)

________________________________

(գտնվելու վայրի հասցեն)

____ ________________ 2018թ.

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

1. **Հայցի քննության համար էական փաստերը և փաստարկները.**

1.1. Ես՝ ______________ հաշվառված եմ ______________________________________________
(Անուն Ազգանուն ) (նշել հաշվառման հասցեն)
հասցեում, սակայն ՀՀ ազգային ժողովի ընտրությունների օրը՝ դեկտեմբերի 9-ին, գտնվելու եմ այլ համայնքում՝ ___________________________ հասցեով:
(քվեարկության օրը գտնվելու վայրի հասցե)

1.2. _______________ 2018թ. դիմում եմ ներկայացրել _____________________________
(նշել այն մարմինը, ում դիմել եք)

ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին:

**1.3.** Սակայն ________________________________ կողմից դիմումը մերժվել է _______ 2018թ.:

(նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

**1.4.** ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Լիազոր մարմինը դիմողին այդ մասին տրամադրում է համապատասխան տեղեկանք:

Հաշվի առնելով այն, որ ըստ գտնվելու վայրի՝ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

**1.5.** ____________________________________________________________________________

(տեղեկություններ վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ, եթե մինչև դատարան դիմելը այն բողոքարկվել է վերադասության կարգով)

**2. Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերականգնել իմ ընտրական իրավունքը և ինձ ընդգրկել ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

**3. Կից ներկայացվող փաստաթղթերը[17].**

**3.1.** Անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

**3.2.** Դիմումի (եթե բողոքարկվել է վերադասության կարգով, նաև՝ բողոքի) մերժման պատճենը.

**3.3.** Պատասխանողին և ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սույն հայցադիմումը ուղարկելը հավաստող ապացույցը.

**3.4.** Այլ գրավոր ապացույց[18] (առկայության դեպքում):

Հայցվոր՝

____________________________ ________________________________

(ստորագրություն)

[17] Սույն գործերով Դուք ազատված եք պետական տուրքի վճարման պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին մասի «ժդ» կետին համապատասխան, հետևաբար, պետական տուրքի վճարման անդորրագիր չի կցվում:

[18] օրինակ՝ մուտքագրված դիմումի պատճենը:

**Հավելված 2**

Ուշադրություն

Եթե ՀՀ-ում առհասարակ հաշվառում չունեք, ապա կարող եք **մինչև 2018 թվականի նոյեմբերի 29-ը** դիմում ներկայացնել ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն կամ այն տարածքի անձնագրային ծառայություն, որտեղ գտնվելու եք քվեարկության օրը՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու նպատակով՝ նշելով քվեարկության օրը ՀՀ-ում գտնվելու վայրի հասցեն.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

____________________________________________
(տարածքային անձնագրային ծառայություն /ըստ գտնվելու վայրի)

## Դ Ի Մ ՈՒ Մ[19]

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ես՝** ____________________________________________________________
(անունը, հայրանունը, ազգանունը)
**անձը հաստատող փաստաթուղթ՝** ________________, **տրված՝**________________________
(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)
**բնակվում եմ** ____________________________________________________________
(բնակության վայրը)
և Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեմ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցելու համար խնդրում եմ ինձ ընդգրկել իմ գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և այդ մասին տալ համապատասխան տեղեկանք:

**Դիմող՝** __________________ «____» ___________ 20 թ.
ստորագրություն

[19] Դիմումի ձևը հաստատված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թ. հունիսի 17-ի N 29-Ն որոշմամբ

Անձնագրային ծառայությունը դիմումը ստանալուց հետո **երեք օրվա ընթացքում** Ձեզ կընդգրկի քվեարկության օրը հանրապետությունում գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում և այդ մասին Ձեզ կտրամադրի տեղեկանք հետևյալ ձևաչափով.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐՈՂԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Քաղաքացի ____________________________________________

(անունը, հայրանունը, ազգանունը)

անձը հաստատող փաստաթուղթ՝ ___________________, տրված՝ ______________________________________

(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)

ընդգրկվել է ______________________________ մարզի ________________________________________ համայնքի,

____________________________________________ հասցեի,

թիվ ________________________________________ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

(ընտրական տեղամասի համարը նշվում է քվեարկության օրվանից 40-ից մինչև 10 օր առաջ ընկած ժամանակահատվածում ստացված դիմումների դեպքում)

_________________________________________________ _______________________

(լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը) (ստորագրություն)

Կ.Տ.

«____» ____________ 20 թ.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ընտրողների ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով՝ համապատասխանաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Եթե մերժում եք ստացել անձնագրային ծառայությունից կարող եք դիմել ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ նաև՝ ԱՎՎ) կամ ՀՀ ոստիկանության պետին, ԱՎՎ-ի կողմից մերժում ստանալու դեպքում կարող եք դիմել ՀՀ ոստիկանության պետին: Վերադաս մարմնին կարող եք դիմել հետևյալ ձևաչափով՝

____________________________________
(անհրաժեշտ է նշել վարչական մարմնի տվյալները՝
ՀՀ Ոստիկանության պետ կամ Անձնագրային և վիզաների վարչություն)

ԴԻՄՈՂ

__________________________
(Անուն Ազգանուն Հայրանուն)

Հասցե՝ ____________________________

____ ________________ 2018թ.

ԲՈՂՈՔ

1. **Բողոքարկման առարկան.**

**1.1.** Ես՝ _________________________________________________ ունեմ ընտրելու իրավունք, սակայն
(Անուն Ազգանուն)

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեմ, ցանկանում եմ մասնակցել ՀՀ ազգային ժողովի ընտրություններին և դեկտեմբերի 9-ին գտնվելու եմ

______________________________________________________________________________
(անհրաժեշտ է նշել այն վայրի հասցեն, որտեղ գտնվելու եք քվեարկության օրը)
հասցեում:

**1.2.** _______________ 2018թ. դիմում եմ ներկայացրել

______________________________________________________________________________,
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)

ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն:

**1.3.** Սակայն ___________________________________ կողմից դիմումը մերժվել է _______ 2018թ.:
(անհրաժեշտ է նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

**1.4.** ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմին

ներկայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և այդ մասին նրան տրամադրում տեղեկանք: */այս պարբերության ներառումը կամընտրական է:/*

Հաշվի առնելով այն, որ ըստ գտնվելու վայրի՝ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

2. **Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերականգնել իմ ընտրական իրավունքը և ընդգրկել ինձ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

3. **Կից ներկայացվող փաստաթղթերը.**

**3.1.** Դիմումի մերժման պատճենը.

Դիմող՝

_____________________________ _________________________________

(ստորագրություն)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները:

Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ հայցվորի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, հայցվորին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել ցանկացած ժամանակ:

Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը, բայց ոչ ուշ, քան հայցադիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցը դատարան կարող է ներկայացվել հետևյալ ձևաչափով.

________________________________________
(անհրաժեշտ է նշել Պատասխանողի գտնվելու վայրի՝
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը)

**Հայցվոր՝**

_______________________
(Անուն Ազգանուն Հայրանուն)

________________________________________
(Հայցվորի անձնագրային տվյալները)

Հասցե՝ ____________________________

Հեռ.՝ ____________________________
(կամընտրական)

**Պատասխանող՝**

________________________________________
(Անձնագրային և վիզաների վարչություն կամ համապատասխան բաժանմունք)

____________________________
(գտնվելու վայրի հասցեն)

__ ________________ 2018թ.

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

**1. Փաստական հանգամանքները.**

1.1. Ես՝ __________________, ունեմ ընտրելու իրավունք, սակայն ՀՀ-ում հաշվառում չունեմ,
(Անուն Ազգանուն)
ցանկանում եմ մասնակցել ՀՀ ազգային ժողովի ընտրություններին և դեկտեմբերի 9-ին գտնվելու եմ _________________________________________________________հասցեում:
(անհրաժեշտ է նշել այն վայրի հասցեն, որտեղ գտնվելու եք ընտրությունների օրը):

1.2. _______________ 2018թ. դիմում եմ ներկայացրել ______________________________՝
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)
ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին, նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն:

1.3. Սակայն _____________________________________ կողմից դիմումը մերժվել է ________ 2018թ.:
(նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

**1.4.** ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն` Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմին ներկայացնում են դիմում` ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին` նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո` եռօրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և այդ մասին նրան տրամադրում տեղեկանք:

Հաշվի առնելով այն, որ ըստ գտնվելու վայրի՝ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

**1.5.** ______________________________________________________________________________

(տեղեկություններ վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ, եթե մինչև դատարան դիմելը այն բողոքարկվել է վերադասության կարգով)

**2. Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերականգնել իմ ընտրական իրավունքը և ընդգրկել ինձ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

**3. Կից ներկայացվող փաստաթղթերը[20].**

3.1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3.2.Դիմումի (եթե բողոքարկվել է վերադասության կարգով, նաև՝ բողոքի) մերժման պատճենը.

3.3. Պատասխանողին և ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սույն հայցադիմումը ուղարկելը հավաստող ապացույցը.

3.4. Այլ գրավոր ապացույց[21] (առկայության դեպքում):

Հայցվոր՝

_____________________________ _________________________________

(ստորագրություն)

[20] Սույն գործերով Դուք ազատված եք պետական տուրքի վճարման պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին մասի «ժդ» կետին համապատասխան, հետևաբար, պետական տուրքի վճարման անդորրագիր չի կցվում:

[21] օրինակ՝ մուտքագրված դիմումի պատճենը:

**Հավելված 3**

Ուշադրություն

Եթե ընտրողների ցուցակներում նկատել եք անճշտություն, որը վերաբերում է Ձեզ (այդ թվում, եթե ընդգրկված չեք ընտրողների ցուցակում), ապա կարող եք մինչև 2018 թվականի նոյեմբերի 29-ը դիմում ներկայացնել անձնագրային ծառայության ցանկացած բաժանմունք կամ ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

______________________________________________
(նշվում է Անձնագրային ծառայությունը)

ԴԻՄՈՒՄ

Ընտրողների ցուցակում անճշտությունը վերացնելու վերաբերյալ

**Ես՝** _______________________________________________________________________,
(անունը, հայրանունը, ազգանունը)

**անձը հաստատող փաստաթուղթ՝**___________________, **տրված՝**___________________________
(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)

**հաշվառված եմ** _______________________________________________________ հասցեով:
(հաշվառման վայրը)

Թիվ ____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում նկատել եմ ինձ վերաբերող հետևյալ անճշտությունը.

______________________________________________________________________________________

_____________________________________________________________________________________:
(պետք է հստակ մատնանշել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունը)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցելու համար խնդրում եմ ուղղել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունները:

Կից՝ անճշտությունը հիմնավորող ապացույցը.

**Դիմող՝** ___________________ «____» ____________ 2018թ.
Ստորագրություն

Անձնագրային ծառայությունը դիմումը ստանալուց հետո՝ **5 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան 2018 թվականի դեկտեմբերի 2-ը** Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները և այդ մասին գրավոր տեղեկացնում Ձեզ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ընտրողների ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով՝ համապատասխանաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Եթե մերժում եք ստացել անձնագրային ծառայությունից կարող եք դիմել ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ նաև՝ ԱՎՎ) կամ ՀՀ ոստիկանության պետին, ԱՎՎ-ի կողմից մերժում ստանալու դեպքում կարող եք դիմել ՀՀ ոստիկանության պետին: Վերադաս մարմնին կարող եք դիմել հետևյալ ձևաչափով՝

____________________________________________

(անհրաժեշտ է նշել վերադաս մարմնի տվյալները՝
ՀՀ Ոստիկանության պետ կամ Անձնագրային և վիզաների վարչություն)

ԴԻՄՈՂ

__________________________

(Անուն Ազգանուն Հայրանուն)

Հասցե՝ __________________________

__ ________________ 2018թ.

ԲՈՂՈՔ

1. **Բողոքարկման առարկան.**

**1.1.** Ես՝ ______________ հաշվառված եմ ________________________________________
(Անուն Ազգանուն) (անհրաժեշտ է նշել այն վայրի հասցեն, որտեղ հաշվառված եք)

հասցեում: Թիվ ____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հայտնաբերել եմ ինձ վերաբերող հետևյալ անճշտությունը.
______________________________________________________________________:
(անհրաժեշտ է հստակ նշել այն անճշտությունը, որը տեղ է գտել ընտրողների ցուցակում)

**1.2.** ______________ 2018թ. դիմում եմ ներկայացրել ______________________________՝
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)
անճշտությունը վերացնելու նպատակով:

**1.3.** Սակայն ______________________________ կողմից դիմումը մերժվել է _______ 2018թ.:
(նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

1.4. ՀՀ ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայու-

թյան դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին: */այս պարբերության ներառումը կամ ընտրական է/:*

Հաշվի առնելով այն, որ անճշտությունը վերացնելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

**2. Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերացնել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունը՝ վերականգնելով իմ ընտրական իրավունքը:

**3. Կից ներկայացվող փաստաթղթերը.**

**3.1.** Դիմումի մերժման պատճենը.

Դիմող՝

________________________________ ______________________________________

(ստորագրություն)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները:

Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ հայցվորի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, հայցվորին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել ցանկացած ժամանակ:

Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը, բայց ոչ ուշ, քան հայցադիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցը դատարան կարող է ներկայացվել հետևյալ ձևաչափով.

______________________________

______________________________
(անհրաժեշտ է նշել Պատասխանողի գտնվելու վայրի՝
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը)

**Հայցվոր՝**

______________________________
(Անուն Ազգանուն Հայրանուն)

______________________________
Հայցվորի անձնագրային տվյալները

Հասցե՝ ______________________

Հեռ.՝ ______________________
(կամընտրական)

**Պատասխանող՝**

______________________________
(Անձնագրային և վիզաների վարչություն կամ համապատասխան բաժանմունք)

______________________________
(գտնվելու վայրի հասցեն)

__ ______________ 2018թ.

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

**1. Փաստական հանգամանքները.**

1.1. Ես՝ ______________ (Անուն Ազգանուն) ունեմ ընտրելու իրավունք, հաշվառված եմ ______________ (նշել հաշվառման հասցեն) հասցեում: Թիվ _____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հայտնաբերել եմ ինձ վերաբերող հետևյալ անճշտությունը. ______________________________ (հստակ նշել այն անճշտությունը, որը տեղ է գտել ընտրողների ցուցակում):

**1.2.** ______________________________________________________ 2018թ. դիմում եմ ներկայացրել
_____________________________________________________________________________________
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)
անճշտությունը վերացնելու նպատակով:

**1.3.** Սակայն ________________________________ կողմից դիմումը մերժվել է _______ 2018թ.:
(անհրաժեշտ է նշել դիմումը մերժած մարմնի տվյալները)

**1.4.** *ՀՀ* ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

Հաշվի առնելով այն, որ անճշտությունը վերացնելու վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին ներկայացրել եմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում եմ, որ դիմումիս մերժումն անհիմն է:

**1.5.** _________________________________________________________________________________
(տեղեկություններ վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ,
եթե մինչև դատարան դիմելը այն բողոքարկվել է վերադասության կարգով)

**2. Պահանջը.**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ վերացնել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունը՝ վերականգնելով իմ ընտրական իրավունքը:

**3. Կից ներկայացվող փաստաթղթերը[22].**

3.1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
3.2. Դիմումի (եթե բողոքարկվել է վերադասության կարգով, նաև՝ բողոքի) մերժման պատճենը.
3.3. Պատասխանողին և ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սույն հայցադիմումը ուղարկելը հավաստող ապացույցը.
3.4. Այլ գրավոր ապացույց[23] (առկայության դեպքում):

Հայցվոր՝

_________________________ ______________________________
(ստորագրություն)

[22] Սույն գործերով Դուք ազատված եք պետական տուրքի վճարման պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին մասի «ժդ» կետին համապատասխան, հետևաբար, պետական տուրքի վճարման անդորրագիր չի կցվում:
[23] օրինակ՝ մուտքագրված դիմումի պատճենը:

**Հավելված 4**

Ուշադրություն

Եթե ընտրողների ցուցակներում նկատել եք անճշտություն, որը չի վերաբերում անմիջապես Ձեզ, **մինչև 2018 թվականի նոյեմբերի 29-ը** կարող եք դիմում ներկայացնել անձնագրային ծառայության ցանկացած բաժանմունք կամ ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

_______________________________________
(նշվում է Անձնագրային ծառայությունը)

### Դ Ի Մ ՈՒ Մ

**Ընտրողների ցուցակում անճշտությունը վերացնելու վերաբերյալ**

**Ես՝** ________________________________________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

**անձը հաստատող փաստաթուղթ՝** ____________________, **տրված՝**___________________________
(սերիա, համար) (օրը, ամիսը, տարեթիվը և ում կողմից)

Թիվ ___ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում նկատել եմ ինձ չվերաբերող հետևյալ անճշտությունը.

________________________________________________:
(պետք է հստակ մատնանշել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունը՝ հստակեցնելով հիմքերը)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասը՝ խնդրում եմ ուղղել ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունը:

Կից՝ անճշտությունը հիմնավորող ապացույցը:

**Դիմող՝** ____________________ «____» _____________ 20 թ.
Ստորագրություն

Անձնագրային ծառայությունը դիմումը ստանալուց հետո՝ **5 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան 2018 թվականի դեկտեմբերի 2-ը** Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները և այդ մասին ծանուցում է azdarar.am համացանցային կայքի միջոցով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ընտրողների ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով՝ համապատասխանաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Եթե մերժում եք ստացել անձնագրային ծառայությունից կարող եք դիմել ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ նաև՝ ԱՎՎ) կամ ՀՀ ոստիկանության պետին, ԱՎՎ-ի կողմից մերժում ստանալու դեպքում կարող եք դիմել ՀՀ ոստիկանության պետին: Վերադաս մարմնին կարող եք դիմել հետևյալ ձևաչափով՝

________________________________________
(անհրաժեշտ է նշել վարչական մարմնի տվյալները՝
ՀՀ Ոստիկանության պետ կամ Անձնագրային և վիզաների վարչություն)

ԴԻՄՈՂ

________________________________
(Անուն Ազգանուն)

Հասցե՝ ________________________________

__ ________________ 2018թ.

ԲՈՂՈՔ

1. **Բողոքարկման առարկան.**

**1.1.** Ես՝ ______________________________, թիվ ________ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հայտնաբերերել եմ անմիջապես ինձ չվերաբերող հետևյալ անճշտությունը ________________________________________________________:
(հստակ նշել այն անճշտությունը, որը տեղ է գտել ընտրողների ցուցակում)

**1.2.** ___________________________2018թ. դիմում եմ ներկայացրել

__________________________________________________________
(անհրաժեշտ է նշել այն մարմինը, ում դիմել եք)
անճշտությունը վերացնելու նպատակով:

